ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ՃԳՆԱԺԱՄԸ» ԵՎ ԳՐԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ԺԵՆՅԱ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Հեգելն իր «Էսթետիկայում» հանգում է այն եզրակացության, որ արվեստները նույն ժամանակի ընթացքում զարգանում են անհամաչափ, այսինքն՝ յուրաքանչյուր ժամանակ ավելի բարենպաստ պայմաններ է ստեղծում արվեստի միայն որոշ ճյուղերի համար: Ըստ այդմ՝ անտիկ (իր բնորոշումով՝ դասական) շրջանում զարգացել է քանդակագործությունը, ռոմանտիզմի շրջանում՝ բանաստեղծությունն ու երաժշտությունը և այլն: Կարելի է ասել, որ նույն տրամաբանությունը գործում է նաև գիտության բնագավառում: Պատահական չէ, որ անտիկ շրջանից սկսած՝ գիտությունները դասակարգում էին «եռյակ» և «քառյակ» խմբերի. առաջինները հումանիտար գիտություններն էին, երկրորդները՝ բնագիտական, որոնք զարգացման իմաստով հաջորդեցին հումանիտարներին: Նշանակում է, որ ի սկզբանե հաջողությունը նույն ժամանակ չի վիճակվում ամբողջ գիտությանը, այլ նրա որոշ բնագավառների:

Այսօր ամբողջ աշխարհում կատարվող քաղաքական, ազգային-ազատագրական, բնապահպանական և այլ ծավալուն փոփոխություններ ենթադրում են գիտությունների զարգացման նոր հարաբերակցություն, ընդ որում՝ գիտության բնագավառում փոփոխությունը կարող է դրսևորվել ոչ միայն այս կամ այն գիտության առաջնահերթությամբ, այլև դրա ներսում կատարվող սկզբունքային տեղաշարժերով: Իբրև վերջին մտքի օրինակ կարելի է հիշել, թե ինչպես 20-րդ դարի երկրորդ կեսին գրականագիտությունը ձգտում էր կատարելագործել իր մեթոդները՝ ի դեմս ստրուկտուրալիզմի և նշանագիտության, դառնալ ավելի ճշգրիտ և, կարելի է ասել, ավելի մրցունակ: Նույն խնդիրն է այսօր ծառացած հումանիտար գիտությունների առաջ:

Հասարակական ու քաղաքական կյանքի և գիտության կապը մեխանիկական չէ և հաճախ՝ ոչ տեսանելի, բայց պատմության փորձը ցույց է տալիս, որ այդ կապն առկա է մանավանդ հումանիտար և հասարակական գիտությունների՝ իբրև ավելի գաղափարախոսական գիտակարգերի պարագայում: Այդ է պատճառը, որ խորհրդային կարգերի փլուզումից հետո, երբ ձևավորվում էր նոր հասարակարգ, գրականագետները շտապեցին հրաժարվել սոցիալիստական ռեալիզմից, պատմական ու դիալեկտիկական մատերիալիզմի սկզբունքներից (թեև դա կարելի է համարել նաև որոշ իմաստով պոստմոդեռնիզմի դրսևորում) և փորձեցին որդեգրել մեթոդաբանական նոր սկզբունքներ: Սա-

կայն բուռն ժխտումին հաջորդեց որոնումների տևական մի շրջան, երբ նորը դեռ լիարժեքորեն չէր փոխարինում նախկինում ձևավորված մեթոդներին, և սկսում էր անհանգստացնել ճգնաժամի ուրվականը: Անցումը դառնում է ցավագին, և անդրադարձները չեն ուշանում: Հրանտ Մաթևոսյանն ափսոսում էր ստեղծված ավանդների կորստյան համար. «Երեկվա պետականության պայմաններում առաջացած պրոֆեսիոնալ քննադատության իշխող բարձունքն ենք կորցնում, համակարգը ցրիվ է գալիս, «շկոլա» ենք կորցնում՝ գիտական մակարդակ, մտքի ռեժիմ: Մշակույթ ասվածը նույնպես ռեժիմի պտուղ է՝ պատմվածքը, վիպակը, պիեսը, թատրոնը, կտավը, երգը... նույնպես ռեժիմ են ուզում, ռեժիմի մեջ կայանալ, ինչպես պողպատը առաջանում է ռեժիմի մեջ...»[1]: Այսինքն՝ մշակույթի և հասարակական իրավիճակի վերը նշված կապը հաստատում է Մաթևոսյանը: Բայց ոչ միայն այդ: Նրա խոսքի շարունակությունից կարելի է եզրակացնել, որ զարգացման յուրաքանչյուր շրջադարձային փուլի ժամանակ առաջանում է ոչ թե իրական ճգնաժամ, այլ ճգնաժամի զգացողություն, երբ որոշակի վակուում է առաջանում հնի և նորի անցման շրջանում: «Գրականության ճգնաժամի մասին խոսում էին դեռ 60-ական թվականներին, երբ Մահարին կար, երբ երիտասարդություն էր եկել: Միության գրական հրապարակում բազմաթիվ հիանալի գրողներ կային, և միայն Հայաստանի գրականության մեջ Վարդգես Պետրոսյանը 15 Հրանտ Մաթևոսյան էր տեսնում: Այդ ժամանակ էլ էին ասում՝ գրականության ճգնաժամ է»[2], հիշում է Մաթևոսյանը: Սակայն Մաթևոսյանը թե՛ գրականության, թե՛ քննադատության զարգացման համար պետական հովանավորության պահանջ է զգում (սա ոմանք կարող են համարել խորհրդային մտածելակերպ, սակայն հայտնի է, թե ինչպես էր Խորենացին գնահատում Պտղոմեոս Եղբայրասեր թագավորին՝ հունական մշակույթը հովանավորելու համար), ուստի ասում է. «Ափսոս գրաքննադատությունը: Գրաքննադատությունը պետք է վարձատրվի, պետք է պետականորեն խրախուսվի»:

Արքմենիկ Նիկողոսյանը իր հոդվածի համար վերնագիր է ընտրում Հր. Մաթևոսյանի «Ափսոս գրաքննադատությունը» արտահայտությունը, բայց եթե Մաթևոսյանը կարծես թե չէր ուզում հավատալ ճգնաժամին, ապա Նիկողոսյանը, ընդհակառակը, բացահայտում է արդեն խորացած ճգնաժամը. «Հստակ արժեհամակարգի բացակայությունը արժեզրկեց քննադատի խոսքը, հայաստանյան գրական տարածության մեջ գրաքննադատությունը ինչքան էլ իրեն դրսևորեց, ինչքան էլ իր գործն արեց, այնուամենայնիվ, չընկալվեց այն առաքելությամբ, որն իրենն էր, ու գրաքննադատն էլ չընկալվեց այն ճիգ ու ջանքով, որ իրենն էր, այլ մնաց որպես կարծիք հայտնող, գովեստ հնչեցնող կամ պարսավանք թափող մեկը, որն այդ կերպ իր բարեկամներին, ընկերներին, թայֆակիցներին, թշնամիներին, չուզողներին է ի ցույց

[1] **Հրանտ Մաթևոսյան**, Ես ես եմ, Եր., 2005, էջ 308:
[2] Նույն տեղում, էջ 309-310:

դնում: Ու գրողը լավ քննադատ հորջորջեց նրան, ով իր մասին գրում էր, ու վատ քննադատ հորջորջեց նրան, ով իր մասին չէր գրում, ավելին՝ ով իր թշնամու մասին էր գրում»[3]: Թվում է, որ սա հենց քննադատության ճգնաժամի արտահայտություն է, սակայն դա գրական բարքերի ու կենցաղավարության նկարագիրն է, որ, ինչպես ցույց է տալիս պատմության փորձը, ավելի կամ պակաս չափով ուղեկցել է գրական ընթացքին: Բայց մի էական խնդիր, այնուամենայնիվ, կա: Վերը ասվածից կարելի է եզրակացնել, որ ոչ այնքան քննադատության ջանքն է պակասել, որքան նրա նկատմամբ հասարակական վերաբերմունքը: 19-20-րդ դարերի քննադատությունը, ինչքան էլ կրքեր բորբոքեր ու բանավեճեր առաջացներ, մեծ ազդեցություն ուներ հասարակական գիտակցության ու գեղագիտական մտքի վրա: Այսօր անհամեմատ նվազել են քննադատության թե՛ ազդեցությունը, թե՛ հեղինակությունը: Ա. Նիկողոսյանի մատնանշած երևույթները վկայում են քննադատության բնագավառում հստակ չափանիշների, գիտականության ու բարոյականության բացակայության մասին, որն արդեն իսկ **ճգնաժամի** ահազանգ կարելի է համարել: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ քննադատության (ընդհանուր առմամբ հումանիտար գիտությունների) մտահոգիչ վիճակը պայմանավորում են երկու փոխկապակցված գործոններ՝ հասարակական պահանջարկի նվազումը և բուն գիտակարգի արժեհամակարգի անորոշությունը: Նմանատիպ մտահոգություններն առավել մեծ քանակությամբ տեղ են գտնում ռուսական մամուլում, որտեղ հոդվածների վերնագրերն անգամ հուշում են խնդրի նկատմամբ հեղինակների վերաբերմունքի մասին[4]: Հոդվածների մեծ մասում հեղինակները կրկին ուշադրություն են հրավիրում հետխորհրդային տարածքի համանման խնդիրների վրա: «Знамя»-ի հոդվածագիրը, օրինակ, նշում է, որ «հաստ» ամսագրերի բացակայության պատճառով, որտեղ հիմնականում տպագրվում էին քննադատական հոդվածները, այժմ քննադատական լուրջ հարցադրումներ պարունակող, սկզբունքային հոդվածների քանակը իջել է մինչև վերջին սահմանն այն աստիճան, որ նման հոդվածները, իբրև մեռնող տեսակ, կարելի է մտցնել Կարմիր գրքի մեջ: Իհարկե, սա միակ տիրապետող տեսակետը չէ, կան հակառակը պնդող լավատես հոդվածագիրներ, ովքեր համոզված են, որ գալու է լավագույն քննադատության ժամանակը, բայց ոչ շուտ, որովհետև «հեշտ հիվանդանում են, բայց չափազանց դժվար բուժվում»:

Ստեղծված իրավիճակը մտահոգիչ է, և տեսաբանները փորձում են գտնել պատճառները: Ոմանք գիտությունների ներկա հարաբերակցությունը բացատրում են տեխնիկական գիտությունների, մասնավորապես նորագույն տեխնոլոգիաների բուռն զարգացմամբ, որը հետին

---

[3] **Արքմենիկ Նիկողոսյան**, Խոսքի տարածություն, Եր., 2015, էջ 279:

[4] Տե՛ս «Критика: последний призыв» // «Знамя», 1999, № 12, **Кондаков И**. По ту сторону слова // «Кризис литературоцентризма в России XX-XXI веков» // «Вопросы литературы», 2008, № 5, «Конец критики?» // «Литературная газета», 24. 02. 2016, **Сергей Козлов**, Осень филологии // «НЛО», 2011, № 110, ևն:

պլան է մղել հումանիտար գիտությունները: Տեսաբանների կողմից նշված՝ տեխնիկական և հումանիտար գիտությունների զարգացման այս հերթագայությունը, որը ենթատեքստում կարծես անհնարին է համարում նրանց միաժամանակյա զարգացումը (թեև չեն ժխտում նույն գիտության շրջանակում մեթոդական բազմազանության զուգահեռ գոյությունը)[5] ակամա հիշեցնում է «եռյակ» և «քառյակ» գիտությունների զարգացման պատմական հաջորդականությունը: Գրականագիտության ճգնաժամը նորագույն տեխնոլոգիաների զարգացմամբ է բացատրում նաև ֆրանսիացի գրականագետ Ֆիլիպ Ռենյեն: Նա նկատում է, որ գրականագիտությունը հումանիտար և հասարակական գիտությունների հետ միասին «վճարում է» անցած ժամանակներում բնական գիտությունների վրա ունեցած գերիշխանության համար: Հիմա կիբեռգիտության արշալույսն է, որն իր առջև խնդիր է դրել «քերականություն մշակել» կյանքի և բնության բոլոր բնագավառների համար, մուտք գործել ամեն տեղ, ուր միտք է ձևավորվում, դառնությամբ ու ոչ առանց հեգնանքի նկատում է Ռենյեն: Առաջ գիտության մարդիկ գրքի մարդիկ էին, իսկ հիմա գիրքը կորցնում է իր նշանակությունը: Առաջ ընդունված էր ասել, որ գրքերը սպանեցին տաճարները (հավանաբար նկատի ունի տեսնելուն փոխարինող մանրամասն նկարագրությունը, ինչպես Հյուգոյի «Փարիզի Աստվածամոր տաճարը» գիրքն է), իսկ հիմա էլեկտրոնիկան է սպանում գիրքը: Հիմա Բալզակի ամբողջ ստեղծագործությունները՝ նկարազարդումներով, նամակներով հանդերձ, կարելի է տեղավորել մի սկավառակի վրա և կարդալ համակարգչի էկրանին: Ինչի՞ մասին հիմա կարող էր գրել Հյուգոն, հարցնում է Ռենյեն՝ նկատի ունենալով համացանցի և հեռուստացույցի հնարավորությունները[6]:

Գիտնականներից ոմանք ավելի հեռու են գնում. նրանք հաշվարկ են անում այն հարցի վերաբերյալ, թե ինչ կարիք կա իզուր միջոցներ ծախսել հումանիտար գիտությունների վրա, որոնք ոչ մի շոշափելի, առարկայական օգուտ չեն տալիս հասարակությանը: Անգլիացի գիտնական Սայմոն Սկեմպտոնը, գրախոսելով Հարվարդի համալսարանի հոգեբան Ջերոմ Կագանի «Երեք կուլտուրա. բնական, սոցիալական և հումանիտար գիտությունները 21-րդ դարում» (2009) աշխատությունը, նկատում է, որ գիտնականի հետաքրքրությունների մեջ ամենափոքր տեղը զբաղեցնում են հումանիտար գիտությունները: Եթե Կագանը իր գրքում բնական գիտություններին հատկացրել է 53, սոցիալականին՝ 118, ապա հումանիտարին՝ ընդամենը 23 էջ: Ըստ Կագանի՝ գիտության մեջ սկսում է գերակշռել բնագիտությունը, կարծես վերադարձ է սկսվել 19-րդ դար, սկսվել է նոր դարվինիզմ: Բնագիտական ուղղության հե-

[5] Օրինակ՝ Ս. Կոզլովը վերը նշված հոդվածում հիշատակում է պատմահամեմատական ու կառուցվածքային մեթոդների զուգահեռ գոյությունը լեզվաբանության մեջ 20-րդ դարի կեսերին:

[6] Տե՛ս **Филипп Ренье**, Тезисы к дисциплине, именуемой «литература» // «НЛО», 2003, № 59 կամ՝ համացանցային տարբերակը՝ http://magazines.russ.ru /nlo/2003/59/

տևորդ գիտնականները հոգեկան հիվանդությունները բացատրում են սոսկ գենետիկայով, անգամ ֆինանսական դժվարությունները բացատրում են կենսաբանական հատկանիշներով: Կագանը դեմ է այս երևույթին, նա առաջարկում է գրադարաններից դուրս գալ և եզրակացություններ անելուց առաջ ուսումնասիրել մարդկանց վարքը: Նա այդ ամենը համարում է դեղագործների ջանքերի արդյունք, որոնք դեղ են առաջարկում մարդկանց բոլոր դժվարությունների դեմ:

Այս տեսությունները, չափազանցելով գեների և նեյրոքիմիայի դերը մարդու կյանքում, միաժամանակ փոքրացնում, նվազագույնի են հասցնում մշակույթի, արվեստի և, իհարկե, հումանիտար գիտությունների դերը և խանգարում նրանց առաքելության իրականացմանը: Այս պայմաններում պակասում է հումանիտարների ինքնավստահությունը սեփական գործի և սեփական ճշմարտության նկատմամբ: Բառը կորցնում է իր արժեքը և միանգամայն տարբեր իմաստ արտահայտում տարբեր գիտնականների բառապաշարում: Ստեղծվում է այնպիսի իրավիճակ, երբ հումանիտար գիտությամբ զբաղվողները ստիպված են անընդհատ արդարանալ, մինչդեռ, ըստ Սայմոն Սկեմպտոնի, նրանք պետք է հարմարվեն պոստմոդեռնիստական սկեպտիցիզմին և ռելյատիվիզմին[7]: Ստացվում է մի իրավիճակ, երբ գիտությունն առաջ է գնում, բայց մշակույթի մեջ պակասում է մարդկայնությունը: Այստեղից էլ բխում է նրա գրախոսության վերնագիրը՝ «Գիտության և մարդկայնության միջև»[8]:

Ըստ վերոշարադրյալի՝ գրականագիտությունը, ասել է թե՝ քննադատությունը, որը ըստ էության գրականագիտության գործնական կիրառությունն է, համակարգչային մեր դարում պետք է գտնի ոչ միայն սոսկ գոյատևելու, այլև մրցունակ գիտակարգ լինելու միջոցներ: Գիտնականները միջոցներ են առաջարկում: Միխայիլ Էպշտեյնը իր «Пролог к будущему профессии» աշխատության մեջ առաջարկում է վերափոխել մասնագիտությունը՝ հայտնագործելով նոր գիտակարգեր և իրացնելով դրանք: Նրա միտքը շարունակում է գրքի գրախոս՝ ամերիկյան մեկ ուրիշ նշանավոր գրականագետ Քերիլ Էմերսոնը՝ հստակեցնելով առաջարկի իմաստը. «Հումանիտար օրգանիզմները, ինչպես մնացած բոլորը, պետք է փոխվեն արտաքին միջավայրի փոփոխությունների հետ»[9]: Էպշտեյնը գտնում է, որ հումանիտարներն ընկել են խոսքի առատության և սխոլաստիկայի մեջ, մինչդեռ պետք է մեթոդներ գտնեն սեփական գործնական ու փորձարարական ճյուղերը զարգացնելու համար: Պետք է... բայց ուշանում են, որի պատճառով նվազում է գրականագիտության ու քննադատության դերը: Իսկ նոր մեթոդները հավանաբար շատ բեռ պետք է վերցնեն իրենց վրա՝ մի կողմից՝ կու-

---

[7] Ռելյատիվիզմը (լատիներեն relativus՝ հարաբերական բառից) մեթոդաբանական սկզբունք է, որը բացարձակացնում է գիտելիքների հարաբերականությունն ու պայմանականությունը, ինչը տանում է դեպի օբյեկտիվ գիտելիքների բացասում:

[8] Տե՛ս «Между наукой и человечностью» // «НЛО», 2011, № 107:

[9] **Кэрил Эмерсон** Трансформативная гуманистика Михаила Эпштейна: Пролог к будущему нашей профессии // «НЛО», 2015, № 1(131).

տակված մշակութային հարստությունը պահպանելու և, առավել ևս, նորը ստեղծելու՝ ապագային մերձենալու առումով: Չպետք է մոռանալ նաև քննադատության գոյության հիմքի և ընդհանրապես գեղարվեստական մշակույթի մասին: Արդեն հիշատակված Ջ. Կագանը գրում է, որ ժամանակակից աշխարհը խիստ կարիք է զգում նոր Սվիֆտի, Կանտի, Գոյայի, Շոուի, Բեկետի, որոնք կստիպեին սոցիալական կամ բնական միջավայրի նկատմամբ ընտրել բարոյական դիրքորոշում և փոխանցել նրանց, ովքեր կորցրել են հույսը և ցինիզմի մեր դարում իրենց մեկուսացված ու ստորացված են զգում:

Գրականագիտություն – գիտական առաջընթաց հարաբերությունն ունի նաև քննության այլ տեսանկյուններ, որոնք դարձյալ թելադրված են գրականագիտության եթե ոչ ճգնաժամի, ապա առնվազն նրա հեղինակության նվազման մտահոգությամբ: Ռուս գրականագետ Սերգեյ Կոզլովի հոդվածի անգամ վերնագիրը՝ «Ֆիլոլոգիայի աշունը», որոշակի մտահոգություն է արտահայտում: Կոզլովը տագնապում է, որ ֆիլոլոգիան կորցնում է իր դեմքը, և նրա զարգացման ժամանակակից փուլը կարելի է համարել պաղելու (հանդարտվելու) փուլ: Կոզլովի մոտեցումը, կարելի է ասել, ներքին մոտեցում է, որովհետև նա իր փաստարկների մեջ շեշտը դնում է ոչ այնքան գրականագիտություն – այլ գիտություններ հարաբերության, որքան «գրականագիտությունը երեկ և այսօր» համեմատության վրա: Համեմատությունը մեթոդների միջև է: Իր դիտարկումներում Կոզլովը հենվում է ֆրանսիացի գրականագետ Անտուան Կոմպանյոնի «Տեսության դևը» («Демон теории») գրքի վրա, որտեղ հեղինակը շեշտադրում է անցյալի մեթոդների իրար բացառող միակողմանիությունը: Շարունակելով այդ միտքը՝ Կոզլովը գրում է, որ եթե անցյալում գոյություն ուներ մեթոդների պայքար, երբ գրականագետը ստիպված էր ընտրել մեթոդներից մեկը՝ «մաքուրը», այսինքն՝ ոչ էկլեկտիկ վիճակով (օրինակ՝ ընտրություն ֆորմալիստների և Բախտինի միջև), ապա այսօր առաջացել է հարյուր տարվա ընթացքում ստեղծված մեթոդների շուկա, պետք է ուղղակի ընտրել նյութին համարժեք մեթոդ: «Այսօր մենք՝ բանասերներս, ապրում ենք կատարելապես այլ ինտելեկտուալ կլիմայում»[10]: Բայց, Կոզլովի կարծիքով, ամեն ժամանակ բերում է իր շանսը, սահմանափակումները և իր ռիսկերը: Եվ եթե մենք չենք կարող խուսափել շուկայի և մոդայի հետ բանասիրության մերձեցումից, նկատում է նա, ապա պիտի ջանանք ծայրահեղ դեպքում ընդունել խիստ մտածված ու խիստ անհատական լուծումներ: Հետաքրքրական է նաև այն, որ Կոզլովի այս մտքերը հնչել են «Կմնա՞ գրականագիտությունն իբրև հումանիտար գիտությունների «թագուհի»» թեմայով կազմակերպված կլոր սեղանի քննարկումների ժամանակ (Մոսկվա, 2011 թ. ապրիլ)[11]: Թեմայի վերնագիրն արդեն հուշում է խնդրի արդիականության մասին:

---

[10] http://www.hse.ru/news/rezent/2905004l.html // «НЛО», 2011, № 110.
[11] Տե՛ս նույն տեղը:

Այս ամենը ցույց է տալիս, որ հումանիտար գիտությունները, մասնավորապես գրականագիտությունը, կանգնած են լուրջ մարտահրավերների առաջ, ուստի պատահական չէ, որ Միխայիլ Էպշտեյնը առաջարկում է նորացնել «հումանիտար օրգանիզմները» և հայտարարում է. «Անկեղծորեն կասեմ, իմ սիրած ինտելեկտուալ զբաղմունքն է՝ հայտնաբերել նոր գիտակարգ և ջանալ այն իրականացնել»: Մի ուրիշ հեղինակ՝ հայտնի փիլիսոփա Հանս Հումբրեխտը, ավելի հոռետեսորեն է տրամադրված գրականագիտության ապագայի նկատմամբ և հայտարարում է, որ գրականագիտությունը, մասնավորապես գրականության պատմությունները, վաղուց սպառել են իրենց, հնացել, եկել է նրանց վերջի սկիզբը: Եվ դա վերաբերում է ոչ միայն գրականագիտությանը, այլև բոլոր հումանիտար գիտություններին, և հարկավոր է ստեղծել նոր, պրակտիկ ու սահմանակարգային (ինստիտուցիոնալ) կազմակերպություններ՝ գիտության այլ ճյուղերի հետ հարաբերություններ ու կապեր ստեղծելու համար[12]: Ամեն դեպքում գիտության աշխարհում երևան են եկել նոր իրողություններ, որոնք գրականագիտությունը (ընդհանրապես հումանիտար գիտությունները) դարձնում են ոչ մրցունակ:

Ոմանք էլ գիտությունների այս նոր հարաբերակցությունը բացատրում են ոչ միայն տեխնոլոգիաների բուռն զարգացմամբ, հումանիտար գիտությունների մեթոդաբանության թարմացման անհրաժեշտությամբ, այլ նաև քաղաքական կարգերի, երկրների փլուզումներով: Ըստ էության դրա արտահայտությունն էր նաև այս հոդվածի սկզբում հիշատակված՝ Հր. Մաթևոսյանի խոսքը: Ինչպիսին էլ լինեն պատճառները, ակներևաբար առաջացել է գրականագիտությանը նոր խթան, ազդակ հաղորդելու անհրաժեշտություն, իսկ դա ամենից առաջ վերաբերում է քննադատությանը, որովհետև քննադատությունն է գրականագիտության սնուցող հողը, Վ. Բելինսկու արտահայտությամբ՝ «շարժվող էսթետիկան», որ կապ է ստեղծում կյանքի և գրականության, գրականության և ընթերցողի միջև:

Քննադատության ասպարեզում երևան եկած նոր երևույթները, բացի համընդհանուր պատճառներից, ունեն նաև երկրորդական հիմքեր, կենցաղավարության անհանդուրժելի ձևեր, հասարակական ու սոցիալական դրդապատճառներ, որոնք հաճախ պայմանավորված են պահի թելադրանքով, բայց ցավալիորեն կարող են որակ կազմել: Այդ մասին ահազանգում են ռուս տեսաբանները: 1994 թ. Սերգեյ Չուպրինինը ցավ էր հայտնում, որ մեր ժամանակներում հայտնվել են այնպիսի քննադատներ, ինչպիսիք են՝ քննադատ-շոումենը, քննադատ-իմիջմեյքերը, քննադատ-աշխարհիկ խրոնիկյորը և այլն: Իսկ ահա Նատալյա Իվանովան ավելացնում է այդ ցանկը նոր տեսակներով. «Կա քննադատ-խուզարկու, քննիչ-հետազոտող..., կա քննադատ-սկյուռիկ, քննադատ-կատարող, դիրիժոր: Կա քննադատ-մոդայաստեղծ, գրականութ-

[12] Տե՛ս «Начала науки о литературе ... и ее конец» // «НЛО», 2003, № 59:

յան մեջ եղանակ ստեղծող...»[13]: Այս շարքը նա շարունակում է՝ ավելացնելով քննադատ-աճպարարին, իլյուզիոնիստին և այլն: «Կա ալյուրը՝ որ գրողն է, կա ջուրը՝ որ ընթերցողն է և, վերջապես, կա խմորիչը՝ որ գրական քննադատն է: Առանց նրա, մեծ հաշվով, չի թխվի ռուսական գրականության հացը»[14], - գրում է նա:

Քննադատության հեղինակության նվազմանը զգալիորեն նպաստում են նաև նրա գիտականության, տեղի և դերի վերաբերյալ ժամանակ առ ժամանակ արթնացող բանավեճերը: Համադրական ձևի մեջ (գրականության տարբեր սեռերի, ճարտասանության ու փիլիսոփայության հետ համաձույլ) սկիզբ առնելով Հին աշխարհի քաղաքակիրթ երկրներում (առավել դասական օրինակը Հունաստանն է)՝ «կրիտիկա» ընդհանրական անունով հանդես եկող մշակույթի այս ճյուղը իր մեջ ամփոփում էր գրականության մասին գիտության բոլոր դրսևորումները: Նաև հետագա դարերում և այսօր էլ եվրոպական ու անգլալեզու գրականագիտության մեջ «քննադատություն» եզրույթը օգտագործվում է իբրև գրականագիտության հոմանիշ: Ռուսական տեսական միտքն է հատկապես քննադատությունը դիտում որպես գրականագիտության՝ իբրև գրականության մասին ընդհանուր գիտակարգի մի բաղադրիչ (տեսության և պատմության հետ միասին), որն առավելապես զբաղվում է ընթացիկ գրականությամբ: Կենդանի գրականության, հետևաբար նաև կենդանի իրականության հետ կապը, ինչպես և պարբերական մամուլում տպագրվելը գիտականության առումով քննադատությանը դնում է ոչ շահեկան վիճակում: Իրականության հետ սերտ կապի արդյունք է այն, որ 19-րդ դարում, մասնավորապես 50-60-ական թթ., քննադատությունն ուներ հրապարակախոսական, խորհրդային իրականության մեջ՝ ընդգծված գաղափարախոսական բնույթ և մաս էր կազմում պետական գաղափարական քաղաքականության կամ, այլ կերպ՝ քաղաքականացված էր: Այսօր էլ հաճախ բառարաններում, երբեմն նաև մասնագիտական գրականության մեջ քննադատությունը համարվում է սահմանային ժանր, որ գոյատևում է գրականագիտության ու ժուռնալիստիկայի միջև: Սա, իհարկե, մեզ համար անընդունելի տեսակետ է, որովհետև առօրյա տեղեկատվության ձգտող լրագրությունը և գեղարվեստական ստեղծագործությունը գիտական չափանիշներով մեկնաբանող կամ վերլուծող քննադատությունը չեն կարող նույն հարթության վրա դիտարկվել: Լրագրական քննադատության մեջ շեշտը դրվում է սյուժեի և գաղափարական-բովանդակային կողմի վրա, գրական քննադատությունը մշտապես առաջնորդվում է գրականագիտական, գիտական մեթոդով, պարզաբանում է գեղարվեստական մեթոդին, ժանրին և պոետիկային վերաբերող այլ խնդիրներ և ըստ այդմ անում իր եզրակացությունները: Լրագրողը նման առաքելություն չունի, մանավանդ երբ օրաթերթում կամ թեկուզ շաբաթաթերթում տեղեկություն

[13] «Литературная газета», 1997, 19 июня.
[14] Նույն տեղում:

է տալիս նոր լույս տեսած գրքի մասին: Պրոֆեսիոնալ քննադատները սովորաբար տպագրվում են մասնագիտական մամուլում, հիմնականում՝ ամսագրերում, գիտական հանդեսներում և այլն: Իսկ օրաթերթում տպագրվող պրոֆեսիոնալ քննադատը, որ գրում է զանգվածային ընթերցողի համար, չի կարող ապահովել պրոֆեսիոնալ ու գիտական մակարդակ, որովհետև նա այդ դեպքում պարտավոր է գրել մատչելի, պարզ, առանց գիտական եզրաբանության: Իսկ առանց անհրաժեշտ եզրաբանության չկա որևէ գիտություն: Այստեղից էլ առաջանում են շփոթը, քննադատության ու լրագրության անհարկի նույնացումը: Նման իրավիճակը ստեղծում է քննադատության երկակի ըմբռնում՝ մի կողմից՝ հերմենևտիկական կամ հոգեվերլուծական սկզբունքներով գրված հոդվածներ, որոնք արտահայտում են գրականագիտության ժամանակակից մակարդակը, մյուս կողմից՝ հայտարարություններով բավարարվող լրագրական տեղեկատվություն, որի հեղինակը, բնավ չի բացառվում, որ կարող է լինել նաև քննադատ: Այս խնդիրը նորից է ճյուղավորվում: Մի կողմից՝ գիտական լուրջ մեթոդաբանությամբ գրված քննադատական հոդվածների ընթերցողների շրջանակը նեղանում է ընդհուպ մինչև պրոֆեսիոնալներ: Այս դեպքում խոսք չի կարող լինել ճգնաժամի մասին: Մյուս կողմից՝ զանգվածային ընթերցողի համար գրված մակերեսային տեղեկատվությունը պետք է քննարկվի լրագրության շրջանակներում՝ ի թիվս այլ տեղեկությունների և չպետք է անվանվի քննադատություն: Այս պարագայում, թերևս, քննադատության ճգնաժամի մասին խոսելն էլ կդառնա ավելորդ: Եթե հարցը տեղափոխենք զուտ հայկական գրական իրականություն, ապա նկատելի կդառնա քննադատության ոչ այնքան որակի, որքան քանակի և ժանրային բազմազանության ընդգծված նվազում: Այսօր ժամանակ առ ժամանակ երևացող գրախոսությունները գրեթե լիովին ծածկում են գրական դաշտը, գրեթե ամբողջությամբ բացակայում են տեսական հոդվածները, գրական դիմանկարները, ամսական կամ տարեկան տեսությունները: Իհարկե, կան երջանիկ բացառություններ, որոնք չեն ժխտում օրինաչափությունը: Եթե քննադատության ժանրային տեսականու աղքատությունը ճգնաժամ կարելի է համարել, ուրեմն իսկապես ճգնաժամ է: Պետք է հաշվի առնել նաև քննադատության բնույթի փոփոխությունը, երբ մամուլում տպագրվող հոդվածները սկսում են իրենց դիրքերը զիջել էլեկտրոնային հոդվածներին: Եվ եթե խոսքը մասնավորեցնում ենք հայ գրաքննադատության շրջանակում, ապա պետք է նկատի ունենանք նաև սերնդափոխության հանգամանքը. նոր սերունդը կիրառում է քննադատության ավելի արդիական ձևեր (տեսագրություն, ձայնագրություն և այլն), որոնք ավանդական ընթերցողի համար անսովոր են:

Վերադառնանք քննադատ-լրագրող համեմատությանը: Քննադատի և լրագրողի տարբերության մասին հետաքրքրական դիտարկումներ է անում ռուս քննադատ Սերգեյ Չուպրինինը: Նա այս հարցը արդիական և կարևոր է համարում, բայց չգիտես ինչու, կարծես ուրախ է,

որ խնդիրը հստակություն ձեռք չի բերում: «Ռուսական ավանդական վեճի մեջ, թե ինչի մաս է կազմում քննադատությունը՝ գրականությա՞ն, բանասիրությա՞ն, թե՞ լրագրության, ոչ ոք, փառք Աստծո, դեռ չի հաղթել»[15], - գրում է նա: Ըստ երևույթին պատճառը սխալ հարցադրումն է, որից ռուսական տեսական միտքը չի ձերբազատվում՝ դժվարանալով որոշել քննադատության տեղը: Սակայն շարունակության մեջ Չուպրինինը հստակորեն հակադրում է քննադատությունը ժուռնալիստիկային: Քննադատությունը նա բաժանում է երկու տեսակի՝ ակադեմիական և ժուռնալիստական: Նա հակադրում է այս երկու տիպերը՝ ասելով, որ մինչ քննադատը մտածում է, ժուռնալիստը հասցնում է իրազեկում տալ, քննադատը գրում է՝ հենվելով սեփական գեղագիտական ընկալումների վրա, իսկ ժուռնալիստը իր գրածների համար պատասխանատու չէ ոչ ոքի առաջ, քննադատը դիմում է լուրջ ընթերցողների «մեռնող դասին», իսկ ժուռնալիստը՝ թերթ կարդացողներին, ժուռնալիստը հանրագիտարանի մակարդակով տեղեկացված է (բայց ոչ կրթված), գրում է հետաքրքիր (բայց ոչ հիմնավոր), տեղեկացնելով զբաղեցնում է (բայց ոչ սովորեցնում): Ըստ Չուպրինինի՝ «ակադեմիական» տիպի քննադատությունը ազդում է (կամ կարծում է, որ ազդում է) գրականության վրա, իսկ ժուռնալիստական քննադատությունը ազդում է (կամ կարծում է, որ ազդում է) գրքի վաճառքի ծավալի վրա: Ընդհանուր առմամբ նա ափսոսանք է հայտնում քննադատության նախկին դերի նվազման համար և արձանագրում, որ թեկուզ լճացման տարիներին արձակին ու բանաստեղծությանը համարժեք քննադատություն կար, բայց ժամանակակից քննադատությունը սպասարկում է գրքի շուկայի շահերին և դարձել է ժուռնալիստական սեռ[16]: Այսուհանդերձ, Չուպրինինի ոչ բոլոր տեսակետներն են ընդունելի: Կարծում ենք, որ քննադատության մասին պետք է դատել, ինչպես ինքն է բնորոշում, ակադեմիական քննադատության օրինակներով: Ըստ երևույթին պետք է հանգիստ թողնել լրագրողներին, որոնք լրագրության շրջանակներում համառոտ կամ ընդարձակ տեղեկություն են տալիս նոր գրքի մասին և ոչ ավելին: Չէ՞ որ հենց ինքն է ասում, որ քննադատությունը քննադատներն են: Ուրեմն քննադատներին և լրագրողներին խառնելով՝ կարիք չկա անհարկի շփոթ ստեղծել: Բողոքելով քննադատության մակարդակի անկումից՝ գրականագետը եզրակացնում է, որ հին քննադատները ինտելիգենտներ էին, նորերը՝ ինտելեկտուալներ:

Հայ իրականության մեջ քննադատություն – ժուռնալիստիկա հարցը տեսական քննարկումների առարկա չի դարձել, բայց քննվել է այլ հարթության վրա: Ժամանակ առ ժամանակ քննության առարկա է դարձել քննադատության գիտականության, գրականագիտություն-քննադատություն հարաբերության հարցը (Ս. Սարինյան, Ժ. Քալանթարյան): Այս խնդրի վերաբերյալ համոզիչ է արտահայտվել Ս. Սա-

[15] **Чупринин С.** Граждане, послушайте меня ...// «Знамя», 2003, № 5.

[16] Տե՛ս նույն տեղը:

րինյանը. «Քննադատության առարկայի և մեթոդի վերաբերյալ առկա են տարբեր մոտեցումներ: Բանավեճի առիթ է տալիս ամենից առաջ գրականագիտության և քննադատության հարաբերակցության հարցը, որն, ի դեպ, նախապես որևէ առանձնացմամբ չի պարտադրվել և գիտակցվել է միասնական և ընդհանուր հասկացությամբ: Ելնելով գրական պրոցեսի և քննադատության սինխրոն գոյակցության պայմանից, թե քննադատությունը գործ ունի բացառապես իր ժամանակի գրական երևույթների անմիջական արձագանքի, իսկ գրականագիտությունը՝ պատմություն դարձած անցյալի հետ, որոշ գրականագետներ ուղղակի հանգում են գրականագիտության ու քննադատության ֆունկցիոնալ անջատմանը՝ փորձելով նրանցից յուրաքանչյուրի համար սահմանել որոշ անկախ ոլորտներ: Հարցի նման դրվածքը անհիմն է թեկուզ այն նկատառումով, որ ելնում է ձևական, պայմանական նախադրյալից, անտեսելով տեսական, մեթոդոլոգիական սկզբունքների ընդհանրությունը, որ ինքնին բացառություն չունի»[17]:

Քննադատությունն այսօր ունի դրսևորման երկու հարթակ՝ ավանդական տպագիր և էլեկտրոնային, որոնց հասցեատերերը հիմնականում տարբեր են: Էլեկտրոնային քննադատությունը, որին, ի դեպ, հղումներ շատ են արվում (այս հոդվածում նաև մենք) դեռևս բավականաչափ կամ գրեթե ուսումնասիրված չէ, ուստի դժվար է ամբողջական կարծիք կազմել ժամանակակից քննադատության մասին: Պակաս կարևոր չէ քննադատության հիմքի՝ գրականության որակի հարցը: Փոխվել են ժամանակակից գրական մտածողությունը և գրականության դերի ըմբռնումը: Ժամանակակից գրողներից շատերը գերադասում են ներանձնանալ անհատի ենթագիտակցության շերտերում, որոնք կարող են լինել խիստ անձնական, երբեմն նաև անառողջ ու հիվանդագին:Լավ է, որ գրականության կենտրոնում հայտնվում է մարդն իր անհատական ճակատագրով, ոչ համայնացվող աշխարհի տիեզերաչափ ու բարդ խնդիրներով, այլ իր փոքրիկ, սեփական աշխարհով: Այս պարագայում մի կողմից՝ գրականության մեջ մարդկությունը դիտարկվում է իբրև մարդկային միավորներից կազմված զանգված (պոստմոդեռնիզմի հերոսը չունի անցյալ ու ապագա, հարազատներ ու ընկերներ, ապրում է ներկայի տվյալ պահով), մյուս կողմից՝ նույն այդ մարդը վիրտուալ շփումների շնորհիվ կապ է հաստատում ամբողջ աշխարհի հետ, իրեն զգում է համաշխարհային իրադարձությունների կենտրոնում: Եվ, ահա, աղետների, ագրեսիայի, այլատյացության, այլասիրության, բռնությունների, պատերազմների ու նաև մոդայիկ թեթև զվարճանքների տեղեկատվական հեղեղի մեջ մարդը կորցնում է իր հումանիտար արժեքները, և նախկինում գրականության քարոզած սիրո, մարդկայնության, կարեկցության և այլ զգացումներ կա՛մ ավելորդ են թվում և կա՛մ էլ թաքնվում են խոր ենթատեքստում: Թերևս այս պատճառով գրակա-

[17] «Հայ քննադատության պատմություն», հ. 1, Եր., 1985, էջ 6:

նության հերոսը մեկուսանում է իր անձնական աշխարհում: Այսինքն՝ միաժամանակ և՛ մենակ է, և՛ ամբողջ աշխարհի հետ: Այս պարագայում էլ քննադատին մնում է զբաղվել կա՛մ հենց գրական հերոսի ենթագիտակցությամբ, կա՛մ գրողի պոետիկական հնարանքներով, տեքստի տարբեր հատվածների հարաբերությունները ճշտելով: Այս կարգի քննադատությունը, որ կարող է գիտության համար լինել արժեքավոր, լայն հասարակության համար կորցնում է իր հետաքրքրությունը: Մեր գործնական դարում քննադատությունը այլևս չի դիտվում իբրև հասարակության գիտակցությունն ու գեղագիտական ճաշակը ձևավորող կարևոր գործոն: Այս ամենի հետևանքով հումանիտար մշակույթը անտեսում է մարդասիրության չափանիշները, իսկ քննադատությունը, որ ավելի շատ է կապված կենդանի իրականության հետ, հաճախ է հայտնվում դժգոհության թիրախում, թեև ոչ միշտ իրավացիորեն:

Բանալի բառեր – *հումանիտար գիտություններ, գրականագիտություն, քննադատություն, նոր տեխնոլոգիաներ, ճգնաժամ, ժուռնալիստիկա, մեթոդաբանություն, արժեհամակարգ, պոետիկա, մրցունակություն*

ЖЕНЯ КАЛАНТАРЯН – ***«Кризис» гуманитарных наук и литературная критика***. – В настоящее время в периодической печати и публичных выступлениях всё чаще выражается озабоченность кризисом гуманитарных наук. В статье выявляются основы подобных умонастроений. Ряд обстоятельств позволяет предположить, что интенсивное развитие новых технологий и технических наук, более практичный образ мышления множества людей, а также резкая перемена идеологии в постсоветских странах ставит перед обществом и наукой новые требования. Как оказалось, литературоведению недостаёт конкурентоспособности, чтобы соответствовать им. Литературная критика – теснее всего связанный с живой действительностью компонент литературоведения – наглядно отражает изменения и чаще становится мишенью недовольства.

Ключевые слова: *гуманитарные науки, литературоведение, критика, новые технологии, кризис, журналистика, методология, система ценностей, поэтика, конкурентоспособность*

ZHENYA KALANTARYAN – ***The "Crisis" of Humanities and Literary Criticism.*** – Concerns about the crisis in human sciences have today become commonplace in various periodicals and in public discourse. This article attempts to disclose the reasons for such thinking. The study of certain facts allows the author to conclude that the rapid development of new technologies and technical sciences, the universally increasingly pragmatic thinking, as well as ideological changes in post-Soviet countries have incurred new requirements, in the meeting of which literary studies has reduced competitiveness. Literary criticism, the component of literary studies more closely related to reality, reflects the above-mentioned changes more vividly and thus becomes a more frequent target of discontent.

Key words: *human sciences, literary studies, literary criticism, new technologies, crisis, journalism, methodology, value system, poetics and competitiveness*